ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

GENERAL SECRETARY OF THE CENTRAL ELECTORAL COMMISSION OF RA

9.07.2019թ. N05-313

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար,
Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող,
Հանրային խորհրդի պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Կարեն Զադոյանին

Հարգելի պարոն Զադոյան.

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը շնորհակալություն է հայտնում Ձեր 28.06.2019թ. հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունների համար, որոնք վերաբերում էին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՄԺԾԾ հայտին:

Անդրադառնալով կատարված առաջարկություններին, հարկ ենք համարում ներկայացնել հետևյալը՝

| | Բաժին | Առաջարկություններ | Ներառվել է/ Չի ներառվել ՄԺԾԾ հայտում | Հիմնավորում |
|---|---|---|---|---|
| 1 | Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում | 1"1 Հանձնաժողովի ռազմավարական նպատակները և թիրախները սահմանելիս առաջնորդվել՝<br>•ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով,<br>•Եվրոպայի ընտրական իշխանությունների ասոցիացիայի ռազմավարական փաստաթղթերով և տարեկան ծրագրերով | 1"1 Ներառվել է խմբագրված տարբերակով: | 1□1 «Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախները» բաժնում ավելացվել է «Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր նպատակները սահմանելիս առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և այն միջազգային կազմակերպությունների ընդունած փաստաթղթերով և ծրագրերով, որոնց հետ Հանձնաժողովը համագործակցում է:»: |
| | | 1□2 Որպես ռազմավարական ուղղություն նախատեսվի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ընտրական գործընթացի մատչելիության ապահովումը, որը բխում է սոցիալական արդարության գաղափարից և ուղղված է ընտրական գործընթացների բոլորին հասանելի լինելու սկզբունքի կիրառմանը: | 1"2 Արդեն իսկ ներառված էր: | «Ոլորտային քաղաքականության հիմնական թիրախները» բաժնում արդեն իսկ ներառված է: Որպես ռազմավարական ուղղություն ներառել հնարավոր չէ, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ընտրական գործընթացի մատչելիության ապահովման ամենահիմնական արդի խնդիրը քվեարկության սենյակների և տեղամասային կենտրոնների մատչելիության խնդիրն է, ինչը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից դուրս է: |
| 2 | Միջոցառումներ և | 2□1 ԿԸՀ նախաձեռնությամբ ստեղծել | 2"1 Առայժմ | Գաղափարը ողջունելի է, սակայն պահանջում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Միջցառումներ և արդյունքային ցուցանիշներ | 2□1 ԿԸՀ նախաձեռնությամբ ստեղծել էլեկտրոնային մեկ միասնական գնահատման համակարգ, որի միջոցով քաղաքացիները անմիջապես ընտրությունն անելուց հետո կգնահատեն ընտրական տեղամասային (տարածքային, կենտրոնական) հանձնաժողովների գործունեությունը:<br><br>2"2 Ներդնել ԿԸՀ աշխատակիցների աշխատանքային գործունեությունը գնահատող գործիքներ, ինչպես նաև առավել խորացված կազմակերպել նրանց վերապատրաստման դասընթացները:<br><br>2□3 Ընտրական գործընթացների կազմակերպման, անցկացման մասին իրազեկման հոլովակների, պաստառների և այլ տեղեկատվական նյութերի հրապարակումը կենտրոնացնել մարզերում: | 2"1 Առայժմ ներառված չէ:<br><br>2"2 Չի ներառվել:<br><br>2"3 Ներառվել է խմբագրված տարբերակով: | Գաղափարը ողջունելի է, սակայն պահանջում է լրացուցիչ տեխնիկական, ծրագրային նախապատրաստական աշխատանքներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ ուղղությամբ աշխատանքներ կկատարի, կփորձարկի գնահատման նման էլեկտրոնային համակարգ և փորձարկման արդյունքների հաշվառմամբ կարող է ընդգրկել հաջորդ ՄԺԾԾ-ում:<br><br>Կենտրոնական ընտրական հանձնաժողովում իրականացվող մասնագիտական գործունեությունը քաղաքացիական ծառայություն է և առաջարկությամբ նշված հարցերը կարգավորվում են «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներով և դրանց համապատասխան ընդունված ենթաօրենսդրական ակտերով:<br><br>Հաշվի առնելով, որ քաղաքացիների իրազեկումը առաջնային է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկելու՝ իրազեկման աշխատանքներն ընդլայնելու համար (այդ թվում՝ բաց դասեր անցկացնելով, երիտասարդների ներգրավելով և այլն): |
| 3 | Ֆինանսական գնահատականներ և ծախսային ար- | «Ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումը կրի | Չի ներառվել | «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ |

ՀՀ, ք.Երևան,0009, Գ.Քոչարի 21ա, հեռ. 54 35 02, 091 49 56 32
21a, G.Kochar str.,0009, Yerevan, Armenia, tel.: . 374 10 54 35 02, 374 91 49 56 32
E-mail: grigoryanl@elections.am

| | | | | |
|---|---|---|---|---|
| | դյունավետություն | պարտադիր բնույթ և նրանց ուսուցանվի նաև հակակոռուպցիոն արժեքների և բարեվարքության սկզբունքների վերաբերյալ» | | մասի համաձայն՝ «5. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝ քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած անձինք մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպու- |

ՀՀ, ք.Երևան,0009, Գ.Քոչարի 21ա, հեռ. 54 35 02, 091 49 56 32
21a, G.Kochar str.,0009, Yerevan, Armenia, tel.: . 374 10 54 35 02, 374 91 49 56 32
E-mail: grigoryanl@elections.am

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | թյունների ներկայացուցիչները:»: Վերոգրյալից հետևում է, որ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացների կազմակերպումն ու անցկացումն օրենքի իմպերատիվ պահանջ է, դրանք կազմակերպվում են յուրաքանչյուր տարի՝ առնվազն մեկ անգամ: Մասնագիտական դասընթացների կազմակերպման և անցկացման կարգը սահմանված է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 124-Ն որոշմամբ: |

Հարգանքով՝

Լ.Գրիգորյան

ՀՀ, ք.Երևան,0009, Գ.Քոչարի 21ա, հեռ. 54 35 02, 091 49 56 32
21a, G.Kochar str.,0009, Yerevan, Armenia, tel.: . 374 10 54 35 02, 374 91 49 56 32
E-mail: grigoryanl@elections.am